նորա վիճակը, երբ արաբացոց իշխանութիւնը Դերբէնդում թուլացաւ, Բագուն ընկաւ Շիրվան շահերի իշխանութեան ներքոյ. դոցա հաւատարիմ մնալու համար քաղաքը վնասուեց. երբ Թոխտամիշ խանը, յարձակուեց Բագուի վրայ. այդ քաղաքում նա ձուլում էր իւր փողերը։ Երբ Շիրվանի վրայ յարձակուեց Իսմայիլ Սաֆին, Բագուայ բնակիչքը յոյս դնելով բերդի պատերի ամրութեան վրայ՝ չէին ուզում դաւաճանել Շիրուանի շահերին։

Այն ժամանակ Իսմայիլը հրամայեց իւր գեներալ Մուհամմէդ Էլեասին և Իգուր Սալիեայիին գրաւել Բագուն և նոքա պաշարեցին քաղաքը, բայց պաշարումը դանդաղ էր յառաջ գնում։

Գարնանը երեւաց ինքը Իսմայիլը և քաղաքը այնպիսի նեղ վիճակի մէջ դրեց, որ բնակիչները ստիպուած էին անձնատուր լինելու. քաղաքի իշխանները դուրս եկան բերդից զէնքը ձեռներին և սաւանները պարանոցներին փաթաթած, Խուլեասա բէկը Իսմայիլից հրաման ստացաւ, որ Շիրվան շահերի բերդում գըտնուող գանձը վերցնի և ուղարկի իրան բանակը։ Խուլիասա բէկը վերցրեց իւր հետ նշանաւոր բագուեցիներին և նոցա ներկայութեամբ տիրապետեց գանձին, որը ժողովրդի ընծաների հետ միասին ուղարկեց Իսմայիլի մօտ։

Որովհետեւ Շիրվանի շահերը թշնամական յարաբերութեան մէջ էին Իսմայիլի նախահայրերի հետ. ուստի վայելելով յաղթողի իրաւունքները, Պարսից նուաճողը հրամայեց արեւելքում պըղծել նոցա հայրերի գերեզմանները և Շիրուան շահերի շինութիւնները հաւասարեցնել հողի հետ, դրանից յետոյ Իսմայիլը հեռացաւ։

Շիրվան շահ Շէյխ Իբրահիմ II հաշտութեամբ չը կատարեց իւր պարտականութիւնները դէպի Իսմայիլ Սաֆին և Պարսիկ նուաճողը 1509 թուին կրկին մուտք գործեց Շիրվանը և ուղղեց իւր ճանապարհը դէպի Բագուն, որոյ կառավարիչը յանձնեց նորան քաղաքը. Բագուն անցաւ Պարսից տիրապետութիւնների շարքը։

Պարսից տիրապետութիւնը Շիրվանում խորտակուեց. Օսմանցիները տիրապետեցին ամբողջ երկիրը. Բագուն Մուստաֆայ փաշայի ձեռքով ամրացրուած էր և կազմեց առանձին սանջակ, պարսիկները չէին ցանկանում հեշտութեամբ յանձնել Շիրվանը. ուս-